ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«24» հունվարի 2019 թվականի № 21-Ա

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՃՇՇ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 166-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.12.2017թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 2 023.9 (երկու միլիոն քսաներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 509.5 հազար (հինգ հարյուր ինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ինչպես նաև Ընկերությունը սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-298 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետով և 5-րդ կետով նախատեսված պայմանները, ինչը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: Ընկերությունը զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հունիսի 5-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ նախարարության կողմից չի ստացվել:

2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 166-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նախարարությունը պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ընկերությանը վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ: Ընկերության կողմից վարչական վարույթի նիստերին

մասնակցություն չի ապահովվել: Սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՃՇՇ» ՍՊ ընկերության ՀՀ Լոռու մարզի Կուրթանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2012 թվականի նոյեմբերի 22-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-029/298 (նախկին 14/610) թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-298 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-298 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

1/24/2019

X

VERIFIED OCSP 24-Jan-19 12:08:33 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118